# ՓԱՍՏԵՐ, ԹՎԵՐ, ԴԵՊՔԵՐ...



Լեհաստանում ստեղծել են մի ապարատ, որը թեթևացնում է հուշարարի աշխատանքը: Փոքրիկ ընդունիչը դնում են դերասանի ականջի ետևում, իսկ անտենան՝ կեղծամի մեջ: Եվ դերասանն արդեն կարող է լսել հուշումը ոչ միայն հուշարարական խցիկի մոտ, այլև բեմահարթակի ցանկացած վայրում:

* *
*



Ամեն տարի երկրագնդի վրա թափվող երկնաքարերի քաշը պատկառելի մի թիվ է կազմում՝ մինչև 30 մլն տ: Այս տվյալն ստացվում է արհեստական արբանյակների օգնությամբ: Մինչև այժմ ենթադրում էին, որ երկրագնդի վրա ընկնող երկնաքարերի քաշը տարեկան չի անցնում 1000 տոննայից:

* *
*



Գինու տարիքը նախկինում որոշում էին մասնագետները և այն էլ միշտ չէ, որ ճիշտ: Վերջերս ԱՄՆ-ում երևան եկավ մի սարք, որի օգնությամբ կարելի է ճիշտ և անսխալ որոշել գինու, օղու, կոնյակի, ռոմի տարիքը: Այդ սարքից ներկայումս օգտվում են մաքսատան ծառայողները (գինու տարիքից է կախված մաքսի չափը): Մամուլում չի հրապարակված թե ինչ սկզբունքով է աշխատում այդ սարքը:

* *
*

Տիեզերանավերի մասերի հուսալիությունը գերազանցում է այն բոլորը, ինչ մարդիկ ստեղծել են մինչև այսօր: Համեմատության համար կարելի է ասել, որ եթե հեռուստացույցի սովորական մասերը այդքան հուսալի լինեին, ապա այն անխափան կարող էր աշխատել 25 հազար տարի:

## ԲԻՈՀՈՍԱՆՔՆԵՐ...

— Ձեր ի՞նչն է:

— Ատամներս:

— Հիմա կնայենք: Այդպես... պակասում են երկու կտրիչները: Ինչպիսի՞ ատամներ եք ցանկանում:

— Սովորական, սպիտակ:

— Ես այդ մասին չեմ հարցնում: Դուք կաթնատամնե՞ր եք ուզում, թե՞ արմատատամներ:

— Ներեցեք, չեմ հասկանում:

— Մենք պրոտեզներ չենք դնում, այլ աճեցնում ենք նոր ատամներ: Դա ամենանոր մեթոդն է: Լինդերին մոտեցնում են մագնիսական ժապավենի վրա ձայնագրված դոնորի բիոհոսանքները, որի մոտ ատամներ են դուրս գալիս: Դրանց ներգործությամբ հիվանդի մոտ սկսվում է ատամների աճը: Կաթնատամներ կարելի է աճեցնել մի սեանսում, իսկ արմատատամները, ձեր լինդերի դեպքում կպահանջեն երեք սեանս: Եթե դուք շատ չեք շտապում, ապա խորհուրդ կտայի, համենայն դեպս, արմատատամներ: Ճիշտ է, դա փոքր-ինչ ավելի ցավոտ պրոցեդուրա է, բայց հետո հո կարող եք ծամել ինչ կամենաք:

— Դե՛ լավ, թող լինեն արմատատամներ:

— Հիանալի՛: Հիմա կընտրենք ժապավենը: Այսպես, վերին երկու կտրիչները: Ահա՛: Դոնոր Վասիլի, վեց տարեկան: Թամարա՛, ձայնադարանից հանիր ժապավենը: Ավելի լայն բաց արեք բերանը: Հիմա մենք լինդերին կամրացնենք կոնտակտները: Մի փոքր բարձրացրեք գլուխը: Ժապավենը գնա՞ց:

— Ահա, այն:

— Հագցրեք մագնիտոֆոնին: Հաղորդալարը միացրեք հիվանդին: Պատրա՞ստ է:

— Այո՛:

— Հիմա հանգիստ նստեցեք, միացնում եմ:

— Ժ-ժ-ժ-ժ-ժ-ժ-ժ-ժ-ժ-ժ...

— Ինչպե՞ս եք ձեզ զգում, հիվանդ:

— Եռնում ատ ուեղ ասամ է:



digitised by A.R.A.R.@

* *
*

Վերջերս մի խումբ բժիշկներ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ստեղծել են չափազանց հետաքրքիր հատկություն ունեցող պլաստմասսա: Նրա հետ շփվելիս բակտերիաների և միկրոօրգանիզմների մեծ մասը ոչնչանում է: Նման պլաստմասսաներից այժմ պատրաստում են խաղալիքներ, դռների բռնակներ: Պլաստմասսայի մակերևույթն իր հականեխիչ հատկությունները պահպանում է մի քանի տարի:



* *
*

Արևմտագերմանական Բրունզվիկ քաղաքի մերձակա դաշտերում մկները տարիներ շարունակ մեծ վնաս էին հասցնում բերքին: Պայքարի ոչ մի միջոց չէր օգնում ոչնչացնելու մկների այդ ահռելի բանակը:

Փրկությունն եկավ անսպասելիորեն... Երբ տեղի օդանավակայանում սկսեցին վայրէջք կատարել ուղղաթիռները, մկները սկսեցին մասսայաբար սատկել: Պարզվեց, որ ուղղաթիռի շարժիչը առաջացնում է չափազանց բարձր հաճախականությամբ օդային տատանումներ, որը մահացու է կրծողների համար:



* *
*

Կոպենհագենում կայացած ակուստիկների միջազգային կոնգրեսում (այն տեղի ունեցավ 1962 թ. օգոստոսի վերջին) ԱՄՆ-ի պատվիրակությունը շշմեցրեց ներկաներին՝ դեպի լուսին արձակվելիք հրթիռի ձայնային էֆեկտի մասին իր հաղորդումով: Արձակման ժամանակ առաջացող աղմուկը հավասար կլինի «Կարավելա» տիպի հինգ միլիոն ռեակտիվ ինքնաթիռների ժխորին: Քսան կիլոմետր շառավղի վրա այդ աղմուկը միանգամայն անտանելի կլինի մարդկանց համար, ալյուսե պատերը կքանդվեն: Բոլոր մարդկանց ու կենդանիներին հարկ կլինի հեռացնել հրթիռի արձակման վայրից առնվազն 35 կիլոմետր:



---

— Բերանում շատ ուժեղ ծակո՞ւմ է: Ո՞չինչ, պետք է մի քիչ համբերել: Արժե մի քիչ ցավ քաշել: Ինչպես առածն է ասում, գեղեցիկ լինելու համար պետք է տառապել: Մի քանի տարի առաջ մենք նոր ատամներ աճեցնելու մասին երազել իսկ չէինք կարող: Այժմ ուժեղացնելով բիոհոսանքները այդ պրոցեսը կարելի է արագացնել հազար անգամ:

— Ա՜-ա-ա-ա-ա...

— Թո՛ւ, ինչ անհանգիստ հիվանդ է: Ախր ես ասացի, որ հարկ կլինի մի քիչ դիմանալ: Սարսափելի ոչինչ չկա, պարզապես ձեզ մոտ ատամներ են դուրս գալիս:

— Օ՜-օ-օ-օ-օ...

— Ա՜յ քեզ փորձանք: Թամարա, կոնտակտներն ամրացրեք քունքերին: Հիմա մենք ձեզ հանգստացնելու համար կտանք այն գոտու բիոհոսանքները, որը կինոկոմեդիա է դիտում: Չէ, տվյալ դեպքում Լենֆիլմը բանի պետք չէ: Տվեք լրիվ անզգայացում Չարլի Չապլինով:

— Ա՜-ա-ա-ա-ա-ա-ա-ա-ա-ա-ա...

— Կանգնեցրե՛ք մագնիտոֆոնը: Դուք ինչո՞ւ եք այդպես բղավում:

— Թամարա, ես ո՞ր ժապավենն ուզեցի ձեզանից:

— Դոնար Վասիլևի:

— Իսկ դուք ի՞նչ եք վերցրել:

— Այն, ինչ դուք խնդրեցիք:

— Հապա ինչո՞ւ հիվանդի բերանում ատամների փոխարեն մազեր են աճում:

— Ես մեղք չունեմ: Այդ զարմյալ ձայնագրանում են խառնել իրար: Նրանց մոտ Վասիլևների մի ամբողջ կույտ է, և նրանք հավանորեն տվել են մորուքի աճման բիոհոսանքներով ձայնագրված ժապավենը, որն օգտագործվում է կոսմետիկայում՝ ճաղատներին բուժելու համար:

— Իսկ դուք որտե՞ղ էիք: Ուղեկցե՛ք հիվանդին կոսմետիկական բաժանմունք: Ասացեք՝ մազերի անհապաղ հեռացում բերանի խոռոչի լորձաթաղանթից: Ինքներդ հետևեք, որպեսզի նրանք վերցնեն արագ ճաղատացող գոտու բիոհոսանքներով ժապավեններ և ոչ թե ինչ-որ անհեթեթություն՝ զարտնակը հանելու համար:

Ի. ՎԱՐՇԱՎՍԿԻ



digitised by A.R.A.R.@